

տարելու, որովհետև հաւատում էին, որ կռապաշտի գերեզմաններ բանալով՝ անձրեւ էի տեղացնում:

Ումանք էլ է են լողացնում գետի մէջ, որ անձրեւ զայ:

Երբեմն էլ երաշտը յառաջանում է նրանից, որ հացատէր մարդիկ կամենալով իրենց հացը թանգ գնով վաճառել՝ երկինքը կտպել են տալիս, որ բերքը ոչնչանայ:

Սրանք գրրացներին «գիր» են անել տալիս, որը էգ օձի արինով գրում է ործ ոձի գլխին:

Կամ խմորից երեխայ են շինում և խանձարաբում, զնում օրորոցի մէջ և մի անզիստակ մարդ վարձում, որ ամբողջ օրը անդադար օրօրէ: Եթէ առ մինչև երեկոյ օրօրում է՝ երկինքը կապւում է, իսկ եթէ հետաքրքրում է, թէ ինչու են լաց չլինող երեխային այսքան երկար օրօրել տալիս և բաց է անում խանձարուը երեխային տեսնելու դիւթը քանդուում է:

Երկինք կապողներից ճարտարագոյնները մի անտեսանելի էշ են շինում, որը զուրով սար ու ձոր շրջում է: Սա քանի զըսում է՝ երկինքը կապւում է: Մարդիկ լսում են սրա զուցը, բայց իրեն չեն տեսնում: Սակայն նա, ով երկմոց (սիրի-սիրի բոյսի տերեւը) ունի ձեռքում, տեսնում է իշխն, նրան ջարդ ու փշուր անում և այսպիսով բաց անում երկինքը:

Կարկուտ.—Կարկտի պատճառած մխաներից աղատ մնալու համար ոչ թէ ուրիշ գաւառների նման Զատկից մինչև վարդագառ առէն երկուշարթի, այլ միայն մի օր, Ա. Թաղէոս առաքեալի տօնին, կարկտի կիրակի են պահում:

Իսկ կարկուտ եկած միջոցին դիմում են հետեւալ միջոցների կարկուտը կտրելու:

- 1) Շրագներ են վառում:
- 2) Խաչերկաթը¹⁾ գուրս են ձգում:
- 3) Եկեղեցու զանգակները զարնում են:
- 4) Առջնիկ տղաները կարկուտի մի հատիկ զնում են տան շէմքի վրայ և զանակով կտրում:

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ա. Բարի ոգիներ

Ցան դէլվաթ.—Սա մի ոգի է, որ անտեսանելի կերպով ապամում է տան մի որեւէ անկինում, երբեմն էլ երեսում տան տէրին օձի, մկան, մարդու, իշի և այլ կերպարանքով:

¹⁾ Թոնրի վրայ դրուող խաչաձեւ երկաթ:

Ամեն օր տղամարդի (տան գլխաւորի) անկողինը ձգելիս վերմակի մի ծայրը յիտ են ծալում, որպէս զի դէլվաթը դայ նրա վերայ նստի:

Ամեն մի կիրակնամտի, գեռ եկեղեցու զանգերը չտուած, տանտիկինները յետ են անում ծալքի (անկողինները դարսելու տեղ) վրայ ձգուած ջեջիմը՝ որպէս զի տան դէլվէթը բարձրանայ նստի այդ փափուկ տեղում:

Երբ գիշերը ստիպուած են լինում թախտը աւելելու նախ աւելի ծայրը փոքր ինչ վառում են ճրագի վրայ և ապա աւելում, աղըն էլ մի անկիւնում կիտում և միայն ցերեկը դուրս թափում, ապա թէ ոչ դէլվաթը կը բարկանայ և տանից կը փախչի:

Նաև ճրագ վառած միջոցին մազերը չեն սանրում, որովհետեւ թախուչի (սանրի ատամներում մնացած մազեր) հետ դէլվաթն էլ դուրս կերթայ:

Կանայք զգուշանում են տան մէջ իրար հետ կռուելուց, ապա թէ ոչ դէլվաթը կը խռովի կերթայ:

Դէլվաթի վերաբերմամբ պատմում էին հետեւալը.

Մի գիւղացի մի գիշեր դաշտով անցնելիս հեռուում նկատում է երկու ճրագ. երբ մօտենում է տեսնում է մի էշ՝ ականջներին երկու վառած մոմ կպցըրած: Էշն ասում է. «Բարաջողում»: Սա վախենալով չի պատասխանում: Եշը կը կնում է բարնը և աւելացնում. Բարն եմ տալում, հնչի՞ չես առնում: Այս անզամ գիւղացին սիրու է առնում և պատասխանում: «Բարով, էշ ախպէր, էդ յժւր ես էթում»:

—Ընձի տար ձեր տուն, ասում է էշը:

—Քե տանեմ մեր տուն թշնչ անեմ, դու վի՞ր էշն ես: Պատասխանում է գիւղացին:

—Ես էշ չեմ, բարկանում է էշը, ես Օհանենց դէլվաթն եմ, համա հիմի խռովիք եմ, ուրիշ տեղ եմ էթում եմ: Էթամ Սուքիասի տուն: Ասում է էշը և անյայտանում:

Հետեւալ առաւօտը տեսնում են, որ Սուքիասի շտեմարանները ցորենով լցուել են:

Մի ժամանակ էլ մի կարաւանատան սենեակներից մինում գիշերները պատի միջից մի ձայն էր լաւում, որ սպառնական ձեռվ ասում էր էկայ հա: Այդաեղ գիշերողները լեղապատառ թողնում փախչում էին: Մի անգամ էլ սրտոտի մէկը միենոյն սպառնալիքը լսելով, փայտով խփում է պատին և ասում. «Դէհ արի»: Անմիշապէս պատը բացւում է և այնտեղ պահուած դէրվաթը իրբն սոկի թափուում է ցած:

Հսման. —Նոր-Բայազէտցիները ևս հաւատում են, որ եթէ

մի որևէ բարիք Աստուածանից նշանակուած չէ մինի համար, իրենց խօսրով դամաթ չէ, ոչ մի գէտքում չի կարող օգտուիլ նը- րանից. մինչդեռ զամաթը ինքն իրեն կը գայ:

Սրա վերաբերութեամբ պատմում են.

Մի անգամ երբ Մովսէս մարգարէն բարձրանում էր սարը Աստծու հետ խօսելու, պատահում է մի աղքատ մարդու, որ ա- րիւն քրտինք մտած մի շալակ ցախ էր տանում քաղաք ծախելու: Մովսէս մարգարէն խդանարուելով՝ ցանկանում է մի ողորմու- թիւն տալ, սակայն մօսք փող լի լինում: այս պատճառով էլ հա- նում է իւր մատի մատանին և տալով նրան՝ պատուիրում, որ հետեւ օրը այդ մատանիով գայ իւր մօսք իրենից ողորմութիւն ստանալու: Ազգաւոր ուրախացած վերցնում է մատանին և աւելի ապահովութեան համար բերնի մէջ պահում: Սակայն երբ բարակ գերանի վրայով կամմանում էր գեան անցնել, յանկարծ սահթա- կում է, ընկնում ջուրը և մատանին էլ կորցնում: Մովսէս մար- գարէն իմաստուն լինելով իմանում է այս, ինչպէս և այն՝ որ մատանին ձկներից մինը կուլ է տալիս: Մերունին հետեւալ օրը տիսուր արտում կրկին գնում է ցախի, պատահում է Մովսէս մար- գարէն, որ յատկապէս սպասում էր նրան: Մերունին վշտացած պատմում է մատանու կորստեան մասին: Մովսէս մարգարէն մը- խիթարում է նրան և մի թաշկինակ լիքը արծաթ փող նուիրում: Մերունին վերցնում է թաշկինակով փողը, շնորհակալ լինում և անմիջապէս վերադառնում տուն, որովէս զի մի նոր փորձանք չպատահի: Ստեղյան այս անգամ էլ, երբ սաստիկ յոկնած նստում է փոքր ինչ հանգստանալու և թաշկինակով փողը գնում է կող- քին, յանկարծ մի թոշում է իջնում և զրամը փախցնում: Մով- սէս մարգարէն այս ևս իմանալով՝ գիմում է Աստծուն և հարց- նում, թէ ինչ է պատճառը, որ այդ խեղճ ծերունին չկարողա- ցաւ օգտուիլ իրեն արուած բարիքից: Աստուած տալիս է Մով- սէս մարգարէին մի փարա և ասում: «Ճար տուր նրան այս փա- րան, քո տուածից չկարողացաւ օգտուիլ՝ գուցէ իմ տուածից օգտուիլ»: Մովսէս մարգարէն կատարում է Աստծու պատուէրը: Մերունին դժկամակութեամբ վերցնում է այդ մի փարա ողորմու- թիւնը և տուն վերադառնալիս դրանով մի ձուկ գնում: Եւ երբ նրա կինը ճղում է ձկան փորը՝ մաքրելու, գտնում է Մովսէս մարգարէի իւր ամուսնուն տուած մատանին: Զարժանքը աւելի մեծ է լինում, երբ ձկան փորոտիքը գուրս թափելիս՝ մի թոշուն մի թաշկինակով լիքը արծաթ կացից գայը է գնում և ձկան փո- րոտիքը առնելով թռչում է: Մերունին անմիջապէս մատանին և զրամին առած ուրախ ուրախ գալիս է Մովսէս մարգարէի մօտ

և պատմում իրեն պատահածը։ Սա վերցնում է իւր մատանին, իսկ դրամը նրան նուիրում, ասելով. «Տար, էս էլ քո զսմաթն է, առանց դսմաթի ոչ մի բարիքից չի կարելի օգտուիլ»։

Ս Բ Բ Ե Ր

Ս. Յոյնաննէս.—Նոր-Բայազէտից դէպի արևելք, մօտ երկու վերստ հեռու գտնուում է ս. Յովհաննէսի ուխտատեղին, Հանդիպակաց ժայռից ահագին քարեր զլորուելով թափուել են իրար վրայ և կազմել մի քարայր՝ երեք փոքրիկ բաժանմունքներով։ Լոյսը քարերի ճեղքուածներից ներս թափանցելով հազիւ ազօտ կերպով լուսաւորում է։ Դէպի այս քարայրը բարձրանալու համար շինուած են սանդուղներ, և սրանց կողքերին կանգնեցրած են բաւականաչափ խաչքարեր, որոնցից շատերը առանց մի որ և է արձանագրութեան են։ Ուխտատեղու քարայրի մէջ ևս կայ մի խաչքար, որի վրայ կարդացւում է. «Եսուրբ խաչս բարեխոսս ծատուրին. Թվ-Ռինի ($=1549$). Քիրամ կազմող, Փոքր ինչ ներքն և կողքին՝ ծատուրս եղի ի խաչի ստն ¹⁾ զապրանացս տասն. ով ինչ մարդ որ հանէ ի սրբոյն՝ խոռվ կնայ սուրբն. Ռինի»։

Քարայրից փոքր ինչ հեռու ընկած մի մեծ քարի երեսին գրուած է. ի թվին ԶՂԸ ($=1549$) Թոմաս ծառայ Աստուծոյ եկի ի Գաւառէն ի ծառայութիւն սուրբ Յովհաննէսին. շատ աշխատեցայ. յիշեցէք ի Քրիստոս։

Աւանդաբար պատմւում է թէ այս արձանագրութեան մէջ յիշուած Թովմա ճգնաւորը ճգնել է այս ուխտատեղու հանգէպ գտնուած քարաժայռի մի ծերպի մէջ, որ այժմ էլ ուխտատեղի է սուրբ Գէորգ անունով։

Քարայրից հազիւ հարիւր քայլ հեռու գտնուում է երկաթաւալկանեան մի հանքային աղբիւր, որ սուրբ է համարուում ²⁾։

Քարայրիս առջն տարածուում է մի ընդարձակ, ծաղկալից դաշտ, ուր Համբարձման տօնին ահազին բազմութիւն ծալապատիկ նստած վայելում է հասարակական մատաղը։

Ուխտաւորները մեխեր են խփում քարայրի և նրա մօտի մեծ քարի վրայ. եթէ առանց ծռուելու ամբողջովին մտնում է քարի մէջ, այս նշանակում է, որ սուրբ Յովհաննէսը կատարելու է նրանց ուխտը, իսկ եթէ չէ մտնում չէ կատարելու. Զափազանց մեծ է թէ խփուած և թէ ծռուած, դէն ձգուած մեխերի թիւը։

¹⁾ Այսինքն Նուիրեցի սրբին։

²⁾ Տես ջրի պաշտամունք զլխում։